Հայրապետական Մաղթանք Կաթողիկե Ս. Էջմիածնի տոնի առիթով (18 հունիսի 2017)

ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ

Տ. ՄՈՒՇԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱԲԱՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱՄՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԿԱԹՈՂԻԿԵ Ս. ԷՋՄԻԱՄՆԻ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

(18 հունիսի, 2017 թ.)

«Իմաստութիւն շինեաց իւր տուն»
(Առ. Թ. 1)

Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. ամէն:

Սիրելի՛ քույրեր ու եղբայրներ, հավատավոր ուխտավորներ եւ այցելուներ, Աստվածհայտնության բացառիկ հրաշքները ականատեսներին երջանկագույն մխիթարություն եւ սփոփանք են բերել: Աստծո սրբարար ներկայության զգացումը անհատների եւ ազգերի համար գաղափարի, արժեհամակարգի ու մշակույթի հիմնովին փոփոխության դժվարագույն անցումը հաղթահարելի է դարձրել: Աստծո այցելությունը մարդկությանը սխրանքի է մղել՝ քարեղենացնելու եւ ոգեղենացնելու ակնթարթը:

«Էջ Միածինն ի Հօրէ եւ լոյս փառաց ընդ Նմա...» (Շարակնոց): Շարականագրի հանճարեղ տողերը գեղեցկագույնս նկարագրել եւ դարերի խորքից մեզ են փոխանցել Միածնի՝ Հայոց ազգին այցելության դարակազմիկ պահը՝ հավատքի մեր հոր՝ Սուրբ Լուսավորչի աղոթքին ընդառաջ:

Տանջահար մարմնով, ծնկաչոք, խոնարհ, դալկացած եւ ոսկրացած դեմքի հանգստության ու հանդարտության տակ սքողված մտահոգություն կար. «սրախողխող» կույսերի սուրբ նշխարները՝ մայր հողին մնացած, երկիրը հայոց՝ աստվածներին զոհած ճենճերի հոտով տարածված, արքունիքը՝ արքայի հանկարծահաս հիվանդությամբ շվար, մեն միայնակ՝ թորգոմյան ազգի ճակատագրին ընդառաջ:

Տարիներ ի վեր խոր գուբի մեջ խավարը խարխափող ձեռքերը ձեռնամած սուրբը բաց երկնքի տակ աղոթք էր մրմնջում՝ առանց աղոթքի տան:

Եվ «յանկարծակի եղեւ ձայն սաստկութեան... եւ բացաւ խորանաշէն յարկն հաստատութեան երկնից», եւ հայտնվեց Միածինը: Ցնծություն եկավ Սուրբ Գրիգորի հոգնաբեկ դեմքին: Պատասխան ստացավ նրա անհանգիստ հոգին: Մխիթարվեց տեսածով: Քրիստոս՝ Աստվածորդին այցելեց եւ լույս ծագեցրեց հայոց երկնակամարի վրա՝ լուսեղեն սյուներով գծագրելով տաճար-կանթեղը, որից ցայսօր էլ լուսավորվում է ողջ աշխարհը Հայոց:

Սիրելինե՛ր, երկինքները միայն Հրեաստանի լեռների ու դաշտերի վրա չեն բացվել, երկնակամարը հրեա ժողովրդին առաջնորդելու համար չի ճեղքվել միայն:

Հայոց հողին էլ իջավ Աստված, սրբացրեց այն եւ բնակվեց այնտեղ: Ոսկե ուռամբ հաստատեց «զսուրբ խորանն լուսոյ», եւ այդ հայտնության ու եկեղեցու հիմնարկեքի պանծալի հիշատակության համար այսօր համայն աշխարհից հավաքվել ենք նրա սրբարար կամարների ներքո՝ փոքր եւ մեծ, արք եւ կանայք, պաշտոնյա եւ սպասավոր: 1714-րդ տոնն է այսօր քրիստոսահիմն Կաթողիկե Սրբոյ Էջմիածնի:

Բացառիկ է այն եւ խորախորհուրդ: Պարզեւ ու ընծա աղոթքի: Քարացած տեսիլք: Աստծո այցելության անջնջելի հետք: Խարանված կնիք «ի վերայ դաշտին Այրարատեան»: Լուսակառույց այս սրբավայրի հիմերը ջրհեղեղը հաղթահարած ապառաժներն են, որի վրա Սուրբ Լուսավորչի ձեռամբ, նրա Սուրբ Աջով օրհնվեց ու հաստատվեց տիրապատվիրան «Աթոռը քահանայապետական»՝ իբրեւ մայր հայոց բոլոր եկեղեցիների: Արդ, ավետարանական պատումի նման, հողմը եւ մրրիկը, փոթորկոտ մարտահրավերները սարսափելի չէին, քանզի հավատքի վեմի վրա էր կառուցվել սրբազնասուրբ մեր Եկեղեցին: Այդ հաստատուն հավատքով է, որ նորադարձ արքան, հայոց աշխարհի անսասանության գրավականը քրիստոնեության մեջ գտնելով, իր թիկունքին Քրիստոսաէջք եկեղեցու վեմերը Արարատի տապանահար քարերից բերեց եւ հայոց երկրի ամրության հոգեւոր բերդը կառուցեց... Տեսիլքը Հայրապետի եւ ուժն ու հավատքը թագավորի: Քրիստոսով այս միասնությունն է, որ այսօր եւս օրինակ է բոլորիս համար: Պատմության ընթացքում մեր ազգին հասած վայրիվերումների հետ այս Սուրբ տաճարն էլ հաճախ խոնարհվել, անչքացել է, բայց միշտ վեր է հառնել կրկին չնորհիվ հայորդյաց, որոնց սերն առ Էջմիածին մղել է զոհողության:

«Երանի նրան, ով հիշատակ ունի ի Սուրբ Էջմիածին», - ասել են մեր հայրերը:

Սերը, գորովանքն ու նվիրումը առ Սուրբ Էջմիածինը անչափելի, անկշռելի եւ անգնահատելի են: Մեզանից ոմանք սիրում են նրա անսա-

«Ի վերայ Աջոյն եւ Սրբոյ Էջմիածնի ամենայն ազգն Հայոց կապեալ կան»: Լոկ արտահայտություն կամ թեավոր խոսք չէ սա, այլ՝ կյանքով ապրված, պատմությամբ վկայված ճշմարտություն, որը խոստովանում և ընդունում է աշխարհի ամեն ծագում ապրող հայ ...»:
(Տ. Մուշեղ եպիսկոպոս Բաբայան, Կաթողիկե Ս. Էջմիածնի տոնի առիթով արտասանված քարոզից, 18 հունիսի 2017):

սանությունն համար իրենց աղոթքով, ոմանք իրենց սերն արտահայտում են սրտաբուխ կամ առատաբուխ նվիրատվությամբ՝ նրա շենության ու պայծառության համար: Ոմանք իրենց սերը փոխանցում են նրանց, որոնց պատմում են հրաշագործ նրա զորության ու փառքի մասին՝ ամենուր տարածելով աստվածահաստատ հռչակը նրա:

Այսօր եւս ապրում է Սուրբ Էջմիածինը:

Էջմիածինը, սիրելի՛ հավատացյալներ, ձեզ եւ ձեր նախորդների հետ, ձեր հավատքի շնորհիվ, ձեր աղոթքների ուժով է, որ քարեղեն շինվածքից աղոթքի տուն եւ սնող մայր է դարձել ու մնում է այդպիսին: Ո՞վ պիտի մտածեր, որ օրերից մի օր, օվկիանից այն կողմ պիտի անցներ հայը: Ո՞վ կկամենա Էջմիածնի ջերմությունը միայն սրտում ծրարել: Եվ այսօր, սիրելինե՛ր, Կաթողիկե Էջմիածնի տոնին, Իջման Սուրբ Սեղանի առջեւ բոլորս ուխտենք՝ եթե ոչ տարին մեկ անգամ, ապա հաճախ այցելել Սուրբ Էջմիածին, զորանալ նրանով եւ զորացնել նրան. «Ուխտս դիք եւ կատարեցէք»: Ապրենք Էջմիածնով, շնչենք նրանով, շենացնենք այն եւ պայծառանանք հայոց եկեղեցյաց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնով:

Ազգեր ելան եւ անկան, գնացին անհետ: Արհավիրքներ բարձրացան, բայց Քրիստոսի հավատքին փարված մեր ազգը հայոց խաչով եւ Էջմիածնում բարձրացված Հայրապետական եւ Հանրապետական մաղթանքի զորությամբ դիմակայեց: Էջմիածինն է, որ դարեր ի վեր մեր անօրինակ պատմության ընթացքում, իբրեւ սիրասուն մայր սնեց եւ որպես ամուր վահան պահպանեց մեզ՝ հասցնելով 21-րդ դար:

Դեռ դարեր առաջ խմաստուն պատմագիրը, վերլուծելով մեր ազգին հասած դեպքերն ու անցքերը, պիտի քանդակեր յուրաքանչյուրիս հոգում եւ սրտում՝ «Ի վերայ Աջոյն եւ Սրբոյ Էջմիածնի ամենայն ազգն Հայոց կապեալ կան»: Լոկ արտահայտություն կամ թեւավոր խոսք չէ սա, այլ՝ կյանքով ապրված, պատմությամբ վկայված ճշմարտություն, որը խոստովանում եւ ընդունում է աշխարհի ամեն ծագում ապրող հայ եւ հայ հոգեւորական, որոնցից շատերն այսօր այստեղ են՝ աղոթքով իրենց ուխտը նորոգելու, Իջման Սուրբ խորանին պատարագված Քրիստոսի սրբարար մարմնին ու արյանը կրկին հաղորդվելու համար:

Սիրելի՛ հավատացյալներ, այսօր ձեզ հետ պատարագի սրբազան արարողությանը ուխտավորաբար ներկա են նաեւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի սիրով առլեցուն բարերարներ Պետրոս եւ Աննա Օրունճագչիելները՝ իրենց բազմանդամ ընտանիքով: Աղոթք բարձրացրինք նրանց գերդաստանի հին եւ նոր ննջեցյալների հոգիների հանգստության համար:

Սիրելինե՛ր, քիչ հետո պիտի կատարվի մաղթանք Սուրբ Էջմիածնի: Թույլ տվեք Ձեր բոլորի անունից շնորհավորել ազգիս Վեհափառ Հայրապետին եւ ասել. Հայրապետ Հայոց, արթուն դէտ Աթոռին Թադէոսի եւ Բարդուղիմէոսի առաքելոց եւ գահակալ լուսաւորչահիմն Սրբոյ Էջմիածնի, Ձեր հայրապետութեան արգասաբեր 18 տարիները բարեբեր եղան մեր Հայրենիքի, Սուրբ Էջմիածնի եւ նրա միւռոնով մկրտեալ աշխարհասփիւռ հայութեան համար: Այստեղ գումարեալ Ձեր զաւակները՝ աշխարհական եւ հոգեւորական դասը, միանում ենք Ձեր երջանկայիշատակ նախորդներից Սիմէոն Երեւանցի կաթողիկոսին եւ նրա իսկ յօրինեալ աղօթքով դիմում առ Աստուած. «Ո՛վ Տէր իմ Յիսուս Քրիստոս. զՔոյակերտ եւ Քոյահաստատ Աթոռդ՝ զի ըստ հաւատոյ եւ ըստ հոգւոյ ծնօղն մեր զսուրբ Էջմիածին, զոր քոյով իջմամբդ հիմնարկեցէր, աստուածայնով լուսովդ ճեւակերպեցէր... աղաչեմք զքեզ... հաստատուն եւ անշարժ պահեա զնա ի վերայ անխախտելի վիմիդ՝ ըստ անսուտ խոստմանդ քոյ: Անպակաս արա ի նմանէ զմշտազեղ եւ զհոգեպարար շնորհս Հոգւոյդ Սրբոյ... զօրացո եւ պայծառացո օր ըստ օրէ: Զարդարուն եւ պերճ պահեա զնա միշտ քոյալընտիր Հայրապետօք, շնորհափայլ Եպիսկոպոսօք եւ Վարդապետօք, եւ ամենայն մանկամբք... ի շինութեան, ի բարեկարգութեան եւ ի խաղաղութեան...» այժմ եւ միշտ եւ հավիտյանս հավիտենից. ամեն: